# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**01 սեպտեմբերի 2017 թվականի N 78**

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի, Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 53-Ն որոշման, ինչպես նաև համայնքի սոցիալական հարցերի հանձնաժողովի՝ 2017 թվականի օգոստոսի 31-ի N 05 արձանագրության պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Համայնքի բյուջեի 4729՝ այլ նպաստներ բյուջեից, հոդվածից 30.0 /երեսուն հազար/ դրամ հատկացնել համայնքի ներքոհիշյալ բնակիչներին.
   1) Ավետիսյան Արթուր Լյուդվիգի՝ 15.0 /տասնհինգ հազար/ դրամ.
   2) Ղազարյան Գայանե Լևանի՝ 15.0 /տասնհինգ հազար/ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2017 թ. սեպտեմբերի 01**

**գ. Նոր Արտամետ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**04 սեպտեմբերի 2017 թվականի N 79**

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 7-րդ գլխով սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. Վարդգես Երեմի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող 025-019 ծածկագրի (վկայական N 1340290, 0.1 հա) բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում տրամադրել 1 փողոց N 89 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2017 թ. սեպտեմբերի 04**

**գ. Նոր Արտամետ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**05 սեպտեմբերի 2017 թվականի N 80**

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 7-րդ գլխով սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. Արաքսյա Վլադիմիրի Ճաղարյանին սեփականության իրավունքով պատկանող 031-011 ծածկագրի (վկայական N 2329786, 0.08 հա) բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում տրամադրել 9 փողոց N 22 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2017 թ. սեպտեմբերի 05**

**գ. Նոր Արտամետ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**05 սեպտեմբերի 2017 թվականի N 81**

**ԱՐԱՔՍՅԱ ՃԱՂԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. մայիսի 18-ի N 912–Ն որոշման պահանջները, ինչպես նաև քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի (հաշվառողի), հողաշինարարի որակավորման վկայական (N 045) ստացած անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը՝ ***որոշում եմ.***

1. Արաքսյա Վլադիմիրի Ճաղարյանին, Կարեն Եղիշի Ճաղարյանին, Արթուր Եղիշի Ճաղարյանին և Մարիամ Եղիշի Ճաղարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 9-րդ փողոց N 22 հասցեում գտնվող 0.08 հա բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 99.73 քմ արտաքին մակերեսով շինությունները՝ 29.11 արտաքին մակերեսով բնակելի տունը, 60.82 քմ արտաքին մակերեսով գոմը, 9.8 քմ արտաքին մակերեսով ծածկոցը, 1 ինքնակամ բացված դուռն ու 1 ինքնակամ բացված պատուհանը ճանաչել օրինական, քանի որ.
   1) դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,
   2) դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 29.11 x 1300 ≈ 37850 /երեսունյոթ հազար ութ հարյուր հիսուն/, 60.82 x 780 ≈ 47440 /քառասունյոթ հազար չորս հարյուր քառասուն/, 9.8 x 780 ≈ 7650 /յոթ հազար վեց հարյուր հիսուն/ և 2 x 1300 = 2600 /երկու հազար վեց հարյուր/ (ընդամենը՝ 95540 /իննսունհինգ հազար հինգ հարյուր քառասուն/) դրամի՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ նշված շինությունները գնահատելու և պետական գրանցման տալու համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** ____________ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2017 թ. սեպտեմբերի 05**
**գ. Նոր Արտամետ**